ՆԱԽԱՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀՐԱՎԵՐ

1-ին փուլ

«ԱյԴի Բանկ» փակ բաժնետիրական ընկերություն, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 13,

Հրավերի նկարագիր՝ մասնագիտացված HSM սարքավորում մատակարարող և տեղադրող կազմակերպությունները հրավիրվում են նախաորակավորման՝ Բանկի համար նշված համակարգերի ձեռք բերման գործընթացներում ներգրավելու նպատակով:

Սույն հրավերով սահմանված պայմաններին բավարարող մասնակիցները կընդգրկվեն «ԱյԴի Բանկ» ՓԲԸ նախաորակավորված մասնակիցների ցանկում և սույն հրավերի հրապարակման պահից մեկ տարվա ընթացքում ուղղակիորեն կկարողանան մասնակցել Բանկի կողմից իրականացվող HSM սարքավորումների ձեռք բերման ծրագրերի շրջանակներում կազմակերպվող մրցույթներին:

Նախաորակավորման փուլում կընդգրկվեն բոլոր այն մասնակիցները, որոնք կներկայացնեն սույն հրավերի շրջանակներում պահանջվող բոլոր փաստաթղթերը և կբավարարեն սահմանված չափանիշներին:

Հետաքրքրված մասնակիցներից պահանջվում է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը և նշված պահանջներին համապատասխանելու վերաբերյալ փաստաթղթային հիմնավորումները՝

Նախաորակավորման չափանիշներ և պահանջներ՝

- ՀՀ պետական լիազոր մարմնի կողմից տրամադրված լիցենզիա
- առնվազն 3 տարվա փորձ տվյալ ոլորտում, կազմակերպությունների տարածքներում (կատարած աշխատանքների ու դրանց ծավալների մասին կազմակերպության տնօրենի կողմից վավերացված տեղեկանք), խոշոր ընկերություններում կատարված աշխատանքների ցանկ, բանկային/ֆինանսական ոլորտում կատարված աշխատանքները կարող են դիտարկվել որպես առավելություն:

- մեկ օրացուցային տարվա ընթացքում 80 000 000 (ութսուն միլիոն) ՀՀ դրամ և ավել պրոյեկտների իրականացում, կատարված աշխատանքների հիմքեր:
- Հարկային պարտավորությունների առկայության կամ բացակայության մասին տեղեկատվութուն, որը չի կարող մեկ ամսից ավել վաղեմություն ունենալ:
- Եթե հանդիսանում է ներկրող՝ նշել ապրանքանիշը
- Ընթացիկ սպասարկման և աշխատակիցների որակավորման վերաբերյալ տեղեկատվություն

  Նախաորակավորում կարող են ստանալ մասնակից այն իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը, որոնք և որոնց սեփականատերերը կամ բաժնետերերը
  - ներգրավված չեն կամ ներգրավված չեն եղել սնանկության վարույթում կամ չեն հանդիսացել սնանկության վարույթում ընդգրկված իրավաբանական անձի սեփականատեր կամ բաժնետեր,
  - չունեն չկատարված պարտավորություն որի գծով առկա է դատական գործ կամ հարկադիր կատարման վարույթ,
  - վերջին երեք տարիներին չեն ունեցել չկատարված պարտավորություն որոնց գծով առկա է եղել դատական գործ կամ հարկադիր կատարման վարույթ,
  - նրանց վերաբերյալ առկա չի եղել հարուցված քրեական գործ կամ հարուցված քրեական գործը չի ավարտվել արդարացնող ակտով:

- Փաստաթղթերի ներկայացման կարգ՝

  Փաստաթղթերը ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով՝ բացառապես procurement@idbank.am էլեկտրոնային հասցեին ուղարկելու միջոցով՝ նշելով «ՆԱԽԱՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ անվտանգության, տեսահսկման, անցագրային ռեժիմի, ազդարարման համակարգեր»:

Հարցերի դեպքում դիմել Սոնյա Ղևոնդյանին՝ հեռ. 093 04 08 08, 096 06 00 95

Ներկայացման լեզու՝ հայերեն,

Ժամկետ՝ 15/08/2025թ.:

2-րդ փուլ

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ նախաորակավորումը ստացած անձանց՝ ԱյԴի Բանկ ՓԲԸ կողմից տարվա ընթացքում կուղարկվեն համապատասխան աշխատանքների կատարման վայր, գծագրեր և տեխնիկական բնութագիր ներառող հարցումներ՝ գնային առաջարկ ներկայացնելու համար:

Գնային առաջարկ պարունակող փաստաթղթերը ներկայացվում են ծրարավորված, որը պետք է լինի սոսնձված և կնքված այն ներկայացնողի կողմից: Ծրարը և մասնակցի կազմած փաստաթղթերը պետք է ստորագրված լինեն կազմակերպության ղեկավարի կամ վերջինիս լիազորված անձի կողմից:

Առաջարկվող գինը ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի պետք է ներառի փոխադրման (Բանկի գլխամասային գրասենյակ), ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը:

Գնային առաջարկ պարունակող ծրարը ներկայացնել բացառապես Սոնյա Ղևոնդյանին (կոնտակտային տվյալներ՝ հեռ 093 04 08 08; 096 06 00 95)